Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2025 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 25636 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 8957 մտից, 5945 ելից, 10734 ներքին:

2025 թվականի ինն ամիսների ընթացքում ստացվել է 591 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 455 քաղաքացի: 424 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 21-ինը՝ մերժվել է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 14 քաղաքացի, բոլոր 14 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 24 դիմում է ստացվել, ստացված 24 դիմումներն էլ բավարարվել են:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 34 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 31 քաղաքացի, ստացված 29 դիմումներին տրվել է դրական պատասխան, 2-ը՝ ընթացքի մեջ:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 5 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմել է 5 քաղաքացի:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 11 քաղաքացի և ստացել դրական պատասխան: